ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Հայնախագիծ» ԲԲԸ տնօրեն
Գրիգոր Ազիզյան
«1» օգոստոս 2024թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Սերգեյ Երվանդի Պետրոսյանի «ԵՐԵՎԱՆԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ» վերնագրված ատենախոսության վերաբերյալ, որը ներկայացված է ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը:

Թեմայի արդիականությունը

Ատենախոսությունը ՀՀ ժամանակակից հույժ արդիական ճարտարապետական թեմաներից է, որ կարգավորում է մայրաքաղաքի կառուցապատման իրավիճակը: Աշխատության նպատակն է ժառանգված և փոփոխված շենքերի ու համալիրների հարմարեցումը արդի պայմաններին: Գիտական խնդիրներ են՝ Երևանում չօգտագործվող հասարակական ու արտադրական շենքերի հաստատագրումն ու վերլուծությունը, դրանց ադեկվատ զարգացումը ներկայիս նոր պայմաներին համապատասխան: Գիտական մեթոդը որակական և համեմատական վերլուծությունն է, որ կատարվում է առաջին անգամ սույն աշխատությունում: Ատենախոսության սահմանները ընդգրկում են՝ Երևան քաղաքը տեղական ու միջազգային զուգահեռներով, որոնք ժամանակագրական առումով ներառում են արդի և ժամանակակից շրջանները: Ուսումնասիրության կիզակետում են վերցվել 20-րդ և 21-րդ դարերի անցումային տասնամյակների գլոբալիզացիայի հետևաքով միջազգային հաղորդակցության փոփոխությունները, ռեգիոնալության սահմանների փոփոխությունները, ժամանակին բնորոշ կորպորատիվ շենքերի նոր դրսևորումները:

Ատենախոսությունը շարադրվել է հաջորդական 3-գլուխներով:

Առաջին գլուխը տեղեկատվական բնույթ ունի, համադրում է վերօգտագործման բնագավառի պատմական զարգացումը, առանձնապես ներառվում է ադապտացիոն հարցերի տեսությունը, պատմական և տեսական տվյալները դիտարկվել են միջազգային զուգահեռներով, որտեղից դուրս է բերվել աշխատության առարկան և ուսումնասիրվող հուշարձանային կազմը:

Երկորդ գլխում ցուցակագրված շենքերից վերլուծվել են տարածքի և միջազգային հասարակական շենքերի օրինակները, իսկ **երրորդ գլխում՝** արտադրական շենքերը:

Ընդհանուր եզրակացություններում ուսումնասիրված կառույցների հարմարեցման լուծումները փնջավորվել են տիպաբանական, հորինվածքային և կոնստրուկտիվ խնդիրների շուրջ, մասնավորելով դրանք Երևանի առանձնահատկություններով:

Բարձր գնահատելով Սերգեյ Պետրոսյանի ատենախոսությունը, այնուամենայնիվ կուզեի դիտարկել, աշխատությունում միջազգային և տեղական գրականության ներմուծման պակասը, որ կարելի էր ավելի համակողմանի ներկայացնել:

Ատենախոսությունը գրված է գրագիտությամբ, այն համապատասխանում է ԲԿԳԿ-ի կողմից ներկայացված պահանջներին: Ինչ վերաբերում է օգտագործված գրականության պակասին, այն առկա դրությամբ կարելի է համարել բավարար և հնարավոր է լրացնել հետագայում: Մնացյալը՝ ատենախոսության թեմայով կատարված 6 հրատարակությունները, լիովին արտացոլում են աշխատության դրույթները, սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Արդյունքում, կարելի է ընդգծել, որ ատենախոսությունը իր դրույթներով ընդունելի է և հեղինակը Սերգեյ Պետրոսյանը, արժանի է ճարտարապետության թեկնածուի հայցվող գիտական աստիճանին:

Կատարող

«Հայնախագիծ» ԲԲԸ ճարտարապետ Ս. ՔԱԼԱՇՅԱՆ